ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 20. Հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ տեղեկատվությունը

Հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ տեղեկատվությունը դիտարկումների հիման վրա ստացված տվյալներն են, ինչպես նաև այդ տվյալների մշակման և վերլուծման հետևանքով ստացված տեղեկություններն ու կանխատեսումները:

Հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության տարածքում ստացված տեղեկատվությունը դասվում է Հայաստանի Հանրապետության տեղեկատվական ռեսուրսների շարքին:

Հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ տեղեկատվությունը, բացառությամբ «Պետական ~~և ծառայողական~~ գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածում նշված տեղեկատվության շարքին դասված տվյալների, բաց և հանրամատչելի է:

(մասը հանվել է 20.03.02 ՀՕ-312)

(20-րդ հոդվածը փոփ. 20.03.02 ՀՕ-312)

Հոդված 23. Հիդրոօդերևութաբանական երևույթների մասին տվյալների՝ Հայաստանի Հանրապետության միասնական պետական ֆոնդը

Հիդրոօդերևութաբանական երևույթների մոնիթորինգի բոլոր տվյալները, որոնք ստացվել են Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գտնվող ազգային հիդրոօդերևութաբանական համակարգի սուբյեկտներից, կազմում են հիդրոօդերևութաբանական երևույթների մասին տվյալների՝ Հայաստանի Հանրապետության միասնական պետական ֆոնդը, որը գտնվում է հիդրոօդերևութաբանության բնագավառում լիազորված մարմնի տնօրինության ներքո:

Հայաստանի Հանրապետության հիդրոօդերևութաբանական ֆոնդի՝ պետական ~~և ծառայողական~~ գաղտնիք պարունակող նյութերի և տվյալների տնօրինումն ու օգտագործումն

իրականացվում է «Հայաստանի Հանրապետության պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Հիդրոօդերևութաբանական նյութերի և տվյալների մասին Հայաստանի Հանրապետության միասնական պետական ֆոնդի արխիվային ֆոնդին պատկանող փաստաթղթերը լրացվում, մշակվում, պահպանվում և օգտագործվում են «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: